

ԿԱՍԻՍ

ՀԱՆԴԵՍ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՐԵԿՈՒԹԻ ՍՍԵՆ ՇՄԲԹ ՕՐ

ՏՆՕՐԷՆ - ԽՄԲԱԳՐԱՊԵՏ
ԳՐԻԳՈՐ ԶՕՀՐԱՊ

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Պոլիս եւ Գաւառներ	40 Ղրուշ
Ռուսաստան	4 Բուպի
Եւրոպա	10 Ֆրանք

ՀԱՍՑԷ

Ղալաթիա, Բզմիքի Օղլու խան, քի 3-4

Ի ԶՄԻՐ

Իզմիրի Հայերուն վրայ շատ աղէկ կամ շատ գէշ խօսած են միշտ, ոմանք՝ անոնց բարեկեցիկ վիճակը տեսած են միայն. այլք՝ հանրային գործունէութենէ հեռու կեցող երիտասարդութիւններն:

Տարբեր տեսակէտներով՝ միեւնոյն հասարակութիւնը տարբեր, դրեժէ հակառական երեւոյթներով ներկայացած է. շատ մօտէն կամ շատ հեռուէն՝ դիտած են զայն ու ամենեւին չի զարմացներ զիս այն հակառակ վրճիռները որ մամուլի միջոցով կ'արձակուին անոր վրայ:

Իզմիրի Հայերը՝ մենէ կանուխ թեւաւորած են հրապարակագրութեան մէջ իրենց Աբուլալովը, որ անայդ վերջաւորս մը փոխուած է հիմայ: Լրագրութեան մէջ մեր անդրանիկներն են ուրեմն: Աբեւեւն Մահուլը, իր կրտսերը,

ահա մօտիկ քառորդ դարէ մը ի վեր կը շարունակուի իր ալեւորած հիմնադրին անվճար հաւատարմովը: Առաջին Աբեւեւը, որ երեւցաւ Ֆրանսայի մէջ, իզմիրցի մը հրատարակեց, Ստեփան Ռուկան. և ինչ որ ալ ըլլայ Ռեֆուսի խրախուսողութեամբ վերածուած այս Հայուն վրայ կազմուելիք գաղափարներ, որքան ալ մեծ մարմանք մ'ըլլայ իր լեզուէն ու գրականութենէն երես դարձնելու գաւանթիւնը, նորէն այդ հրապարակագրին անցեալ գրական վաստակը կեցած է ու իր անունը մոռացումէ փրկելու պիտի բուէ:

* *

Անհատական զարգացումով իզմիրի Հայերը մայրաքաղաքի Հայերէն հոլ չեն մնացած, ու ճիշդ այս անհատական գերազանցութիւնն է որ մնաւած է իրենց:

Հոս Մանուրեան մը կը կենայ, հոգ Ռսկան մը, Կոստանդեան մը, Նուպար մը, Մսերեան մը — ամենէն ծանօթները յիշելով — և այս զրուած, բաժ-

նուաժ գրական ոյժերը Ագամեմնոնի ճամբարը կը յիշեցնեն :

Երեւակայեցէ՛ք մեծ հաւատացեալներ որոնց իրաքանչիւրը իրեն յատուկ մատուց մը շինեւ տար ու հո՛ն միայն աղօթեւ ուղէր, երբ այնքան դիւրին էր իրենց՝ եկեղեցի մը շինեւ ուր հասարակութիւնն ալ գար աղօթեալու: Ահա՛ իզմիրի գրական մարդոց անսեռած ճշմարտութիւնը. ժողովուրդը՝ որ ամեն հրապարակագրի հոգածութեան սուարկան պէտք է ըլլայ, իրենց ուշադրութեան արժանացած ըլլալ չթուիր: Գրականութեամբ զբաղած են իբրեւ ռեֆրէններ և իրենք զիրենք ու և է պարտաւորութեան գաղափարով կապուած չեն զգացած հասարակութեան հանդէպ:

Ասոր համար է որ առօրեայ օրականութեմ մը չունին, ասոր համար է որ անդրանիկ Արեւելի խմբագրապետը չքաշուիր իր լեզուն մոռցած ըլլալը խոտափանելէ՝ յորմէ հեռէ ֆրանսերէնը մշակած է միայն ու ասոր համար է գարձեալ որ Մէֆիսթի հեղինակը իր նոր աշխատութիւնը ֆրանսերէն կը պատրաստէ:

* * *

Եւ երբ այդ գրական մարդերէն ոմանք այսպէս կը թերանան, կը լքին ու իրենց նշանակութիւնը կը կորսնցնեն, ի՞նչ կ'ընէ հասարակութիւնը անդին: Մօտէն ճանչնալու՝ գիտեմ որ այդ հասարակութիւնը չի խաբուիր Տէլէմարի նաւուղիքը պատրուղ գիցուհիէն որ Ոսկանի մը, Կոստանդեանի մը պէս մեծ իմացականութիւնները կրցած է մոլորցնել անոնց աչքին՝ ֆրանսական լեզուն տալով այն տեղը, որ մայրենի լեզուն յատուկ է:

Տոհմային արժանապատուութեան զգացումը վառ ու կենդանի է հոն և իզմիրցոց Արեւելեան Ալի-ճէր, զոր Միսթի թղթակցին անձուկ միտքը զբօսարան

մը կարծած է, այդ զգացման ամենէն ազնիւ արտայայտութիւնը, ինքնուրոյն անհատականութեան մը գովելի ցոյցըն է:

Իզմիրի Հայերը Եւրոպացւոց Կիւսները կը յաճախէին ու խել մը լռեանքներ, որոնցմէ ձեւացած են այդ Կիւսները, համարձակեր էին պէտք եղած յարգանքը զլանալ մերիններուն:

Արեւելեան Ալի-ճէր հաստատութիւնը՝ ինքզինքը յարգել տալ գիտցող հասարակութեան մը կողմէ տրուելիք վաշելուչ պատասխանն էր ադոնց:

Ահա՛ ինչ որ պէտք է տեսնել այդ հայ Ակումբի հաստատումին մէջ:

* * *

Այսպէս ահա պարզ հասարակութիւնը կը շարունակէ պահել իր աւանդութիւնները, որոնք բոլորն ալ պատուոյ աւանդութիւններ են: Ու այս մըրցումի քաղբին մէջ ուր գործունէութեան ամեն ճիւղերուն համար սաստկագոյն պայքարը կը մղուի անընդհատ, մեր ազգակիցները իրենց թիւէն անհամեմատ կերպով բարձր դիրք մը ձեռք բերած են ու միշտ բարձր պահած են մեր անունը:

ԳՐԻԳՈՐ ԶՅՆՐԱՊ

ՄԱՆԿՈՒԹԵԱՆ ՅԻՇԱՏԱԿՆԵՐ

ԻՄ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԿԵԱՆՈՒԹՅՈՒՆ

Դ

Վեց ամսոյ չափ կանոնաւորապէս հասարակագրութեան Զեյթակի Բեդրաքիին(1) դեղարանն ի Պահճէ-գաբու, Համիտիէ թիւրպէին քովի փոքրիկ հրապարակին անկիւնը քաբուկիր խանութ մը, այժմ սրճարանի փոխուած:

[1] Պոլսոյ ղեկագործներուն զրուխն [ուստապաշխ] էր:

Շաբաթ իրիկուն մը տուն վերագար-
ձած էի ըստ սովորութեան : Շառ չան-
ցած՝ դուռը կը բացիի , և ահա ժամկոչ
մը : «Աղան հո՞ն է :—Ձէ , տահա չեկաւ»
կը պատասխանեմ : — Պարվիրաբարանէն
Հայր Սուրբ մի եկած է . ողջուն բրաւ ,
կը խնդրէ որ աղան վաղ առտու ժամէն
ելլելուն դպրատուն հրամմէ , գունիկ ալ
հետը . Հայր Սուրբը ձեզ տեսնալ կ'ուզէ :

Քիչ յետոյ հայրս եկաւ և ծանուցի
ժամկոչին բերած հրաւերը :

«Պատրիարքարանէն(2) . . . Հայր Սուրբ
մը . . . մեզ կ'ուզէ . . . ի՞նչ բան ունի մե-
զի հետ , հարցուց հայրս ինքնիրեն զար-
մացմամբ . . . քեզ ալ ինչո՞ւ հետս կ'ուզէ
կոր . . . աճայի՞ պէ՛յ . . . կիտէլիմ պագա-
լըմ նէ՛ իշ տիր» :

Հետեւեալ առաւօտ , եկեղեցւոյն ար-
ձակուրդէն յետոյ դպրատուն գնացինք
հօրս հետ և ներկայացանք Հայր Սուր-
բին , որ սիրալիք քաղաքավարութեամբ
ընդունեց զմեզ : Անունն էր Եփրեմ վար-
դապետ , բաւական ուսեալ եկեղեցական
մը , որ քանի մը տարի յետոյ եպիսկոպոս
ձեռնադրեցաւ . Կարնոյ վիճակին վրայ :
Զմեզ հրաւիրելուն պատճառն յայտնեց
հօրս՝ գրեթէ հետեւեալ իմաստով .

«Ազգը գիշերօթիկ ուսումնարան մը
կառուց յիւսկիւտար Ս . Երուսաղէմայ
սեփական վանքին տեղը , «Ճեմարան Ս .
Երուսաղէմի» անուամբ , և Պոլսէն ու գա-
ւառներէն ուշիմ և ըստ բաւականի պատ-
րաստեալ տղայք կը հաւաքէ բարձրագոյն
ուսմամբք կրթելու համար : Ինձ պաշտօն

[2] Պէտք է գիտնալ որ Պատրիարքարանին
անունն անարկու էր այն ժամանակ : Երբ ըս-
տապան մը մէկուն ներկայանար եւ «Հրամմէ ,
Վէրիլ Հայր Սուրբը քեզ կ'ուզէ , , ըսէր , . մար-
դուն թուրք կը ցամբէր բերնին մէջ եւ ոտքով
մեռքով զողալ կը սկսէր : Ընդդիմանալ կարելի
չէր : Բարապանը վերաբերին տակ անբաւոր
շղթայ մ'ունէր , զոր ընդդիմացողին վիզը կ'ան-
ցունէր բռնութեամբ եւ այնպէս կը քաշէր կը
տանէր գամիւն տանելու պէս , եւ ոչ որ կարող
էր մեռքէն առնուլ : Վէրիլ Հայր Սուրբին հետ
մասնաւոր կատակ կարելի չէր : Առանց երկար
յառաջարանի , կը պառկեցունէր պատկառելի
խալփախով եւ լայնարդանց վերաբերուով պարո-
նը կամ աղան , եւ 25-30 գաւազանի հարուած-
ներով կը մեծաբէր :

յանձնած է չրջիլ մայրաքաղաքիս թաղերն
և փնտռել գտնել յարմար և արժանաւոր
տղայք յաշակերտութիւն ճեմարանին :
Արդ՝ իմացայ որ այս որդիդ թաղիս մէջ
գտնուած տղայքց առնէն յաջողակներէն
մին է ուսման համար , հրաւիրեցի զքեզ
յորդորելու . որ ճեմարան զրկես , սրպէս
զի այլ և այլ գիտութիւններ ու լեզուներ
ուսանելով , ազգին օգտակար անգամ մը
լինի և ծնողացն ալ պարծանք : Անշուշտ
քու ալ փափաքած բանն է : Այնպէս չէ՞ ,
Սիմօն աղա :

Հայրս վարանիլ սկսաւ : «Արհեստի
տուած եմ , Հայր Սուրբ : — Ի՞նչ արհես-
տի :—Դեղագործութեան : — Բայց ձեմա-
րանին մէջ կրթուիլն և մեծ գիտնական
մը լինելը՝ պարզ դեղագործ մը լինելէ ա-
ւելի օգտակար և պատուաբեր չէ՞ զա-
կիդ համար : Այսպիսի բաղդ մը հազարէն
մէկ մարդու չի ներկայանար . կարելի՞ է
մերժել , լաւ մտածէ , Սիմօն աղա : » Հայ-
րս առարկութիւն չունէր ընելիք : «Կամք
Տեառն օրհնեալ եղիցի , ըսաւ . մատչմ'քի
Սրբութիւնդ ատանկ լայլքի կը տեսնաս
կոր , ես ալ սիրով կ'ընդունիմ :

Հօրս հաւանութիւնն ստանալէ յետոյ ,
Եփրեմ վարդապետ ինձ դարձաւ . «որդ-
եմ'կ , ըսաւ , քու վրայ գովութեամբ խօ-
սեցան ինձ , բաւական յառաջացած ես
եղեր ուսման մէջ . ճարտասանութիւնն
աւարտեր ես , կը փափաքիմ որ զբարա-
շարադրութիւն մը գրես և տեսնեմ . օ՛ն ,
որդեակ , սա քովի սենեակը գնա և հոն
առանձին նստելով բան մը շարագրէ . օ-
րինակի համար՝ թէ ո՛րչափ օգտակար է
ուսումն , եւ՝ ընդհակառակն՝ ո՛րչափ վնաս-
ակար է սգիտութիւնն : Երկար չլինի՝ ,
կարճ և ամփոփ : Առտիկ թուղթ և գրիչ :

Գնացի քովի սենեակը , կէս ժամու մէջ
բան մը միտտեցի , զոր չեմ յիշեր բնաւ ,
և տարի մատուցի վարդապետին : Նախ
ինքնիրեն կարդաց՝ մերթ ընդ մերթ հա-
ւանութեան նշաններ ցուցնելով . յետոյ
բարձր ձայնիւ կարդաց ծանր ծանր , շեշ-
տելով և վերջացուց՝ գովեստ և օրհնու-
թիւն տալով ինձ : Դարձաւ հօրս . «Սիմօն
աղա՛ , զաւկիդ արիւնը պիտի մոնկիր ար-
հեստի տալով : Փառք տուր Աստուծոյ որ

այս այցելութիւնն եղաւ քեզ», և այլ փայլուն կամ ուռուցիկ խօսքեր:

Նոյն միջոցին Եփրեմ վարդապետ նըշմարեց որ Պալաթու եկեղեցւոյն աւագերէցը, ծերունի Տ. Մեղքոն քահանայն, որ զիս մկրտած էր և հոն ներկայ, արտօնք կը թափէր նստած տեղը: «Կուլա՛ս, ի՞նչ կ'ընես, Տէր Հայր:—Ուրախութենէս, Հայր Սուրբ: Կարծես թէ Ներսէս Լամբրոնացիին մէկ ձառն էր կարգացածդ:» Եւ շատ մ'օրհնութիւններ: Հարկ չկայ ըսելու թէ այս անտեղի գովասաններն անչափապէս կը սրարարէին իմ սնտախառութիւնը:

Վերջապէս հրաժեշտ առինք Եփրեմ վարդապետէն և տուն վերադարձանք: Մայրս՝ հետաքրքիր՝ հարցուց թէ ինչո՞ւ համար մեզ ուզեր էր Պատրիարքարանի վարդապետը: Հայրս հասկցուց գործը: Մայրս ընդդիմացաւ ի սկզբան: Զիս գիշերները չտեսնե՛լ, մանաւանդ ամիսներով երեսաւ բնաւ չտեսնե՛լ, յոյժ ծանր կուգար իրեն: Եւ սկսաւ լալ: Հայրս երկարօրէն ջանաց համոզել, և վերջապէս հաճեցուց խոստանալով որ շաբաթ իրիկունները բերել տայ զիս և երկուշաբթի առաւօտները զրկէ: Անդորձադրելի խոստում: Վասն զի այն ժամանակները տակաւին չօգնեալ չէր բաներ, և նաւակով Իւսկիւտար երթեակէկէլ, մանաւանդ ձմեռը, վտանգաւոր լինելէ զատ, յաճախ անհնարին ալ էր:

Հետեւեալ օրը, մեր տաներէց քահանայն, Քարուալէաթճի Տ. Կարապետ հայրը(3), տուն գալով մայրս կը համոզէ չի զրկելու: «Պօշ բան է, օրհնեալ խուլիս, աղադ ի՛նչ սորվեր է նէ հերիք է, շատ է փիլէ. վարդապետ կայ քի անոր չափ բան չիյտէ. արհեստ, արհեստ, ուղղական սեռականը փոր չի կշառցուներ. «զվաստակս ձեռաց քոց կերիցես» կ'ըսէ Ս. Գիրքը: Հէմ աղէկ ալ չէ շատ կարգալը. ես՝ անհաւատ կ'ըլլայ, ես՝ խելքը կը թռցունէ: Կը հասկընա՞ս, օրհնեալ խուլիս, ետքը քարերով կը ծեծեն զլուսդ:» Մայրս տարհամոզելու համար բաւականէն աւելի էր այսչափը: Փութանք ըսել սա-

[3] Ալէաթճեան Դեր. Դրիգորիս Սրբազանին պատմը:

կայն թէ քահանայն անկեղծ էր. իւր ներքին համոզումն էր որ կը յայտնէր պարզաբար: Երեկոյին կ'իմանայ հայրս և կը բարեկանայ քահանային, որ այսպէս եկեր տաք տպուրին մէջ պաղ ջուր լցեր էր:

Մայրս այս անգամ անդրդուելի էր: «Ըլլալու բան չէ, կ'ըսէր, սըկէ հունա չեմ թողուր զաւակս:» Հայրս՝ ճարահատեալ՝ կը դիմէ ծերունի Տ. Մեղքոնին և կ'աղաչէ որ մեր տունը գայ և համոզմայրս: Կը հաճի պատուական քահանայն, և հետեւեալ օրը ցերեկին տուն գալով՝ բաւական կ'աշխատի համոզելու, և վերջապէս կը յաջողի:

Աստ ներուրի ինձ համառօտ տեղեկութիւն մը տալ այս քահանային վրայ, որ ժամանակին նշանաւոր դէմքերէն մին էր, ինչպէս Մայր եկեղեցւոյ Տ. Մեսրոպն, որ ընդարձակ քերականութիւն մը չինած էր գրաբառ լեզուով, Իւսկիւտարի Փափաղեան Տ. Յօհաննէսն, որ ուսումնական քահանայ մ'էր և լաւ քարոզ կամ խրատ կը խօսէր. Բերայի Տ. Զաքարիան, որ նշանաւոր գործեր կատարած է Բերայի մէջ, Օրթագեղի Տ. Գալուստն, որ Օրթագեղի բոլոր ամիրաներուն և նշանաւոր անձանց տաներէցն էր և ամենուն սիրելի. Պալաթու Տ. Յօհաննէս Հիւնքեարպէյէնտին (հայր Արժ. Տ. Յօհաննէս Հիւնքեարպէյէնտեանի), որ պատկառելի քահանայ մ'էր փառաւոր ճերմակ մօրուքով(4) և քաջ տաճկադէտ, միանգամայն բանաստեղծ, սիրելի Պեղճեան Յարութիւն ամիրային:

Տ. Մեղքոն, ի սկզբան արհեստով կաղմարար, իւր տանը մէջ կ'աշխատէր. միանգամայն վարժապետութիւն կ'ընէր: Հայրս, ինչպէս նաեւ Կարապետ Պատրիարքն, և եթէ չեմ սխալիր, Յակոբոս Պատրիարքն իսկ աշակերտութիւն ըրած էին անոր՝ իրենց մանկութեան ժամանակ: Յետոյ քահանայ ձեռնադրուեր էր Յօհաննէս Պատրիարքէն: Ըստ բաւականի հըմ-

4) Վեհ. Սուլթան Մահմուտ Կայսրն օր մը տեսնելով զՏ. Յօհաննէս, զմայլեր էր մօրուքին գեղեցկութեանը. «Նէ՛ կիւզէլ սարալ, ըսելով, եւ ծրար մ'ոսկի պարգեւ տուեր էր: Ասկէց մընացած էր «Հիւնքեարպէյէնտի», մականունը:

սուսթիւն ունէր Ս. Գրոց , ինչպէս նաեւ այն ժամանակ դառնում կրօնական եւ պատմական գրութեան: Ուսումնասէր էր, այժմու եկեղեցականաց մեծ մասին պէս ծոյլ և դատարկամիտ չէր . վարդապետի չափ և անոնց շատերէն իսկ լաւ խրատ կը խօսէր. եկեղեցական կանոնաց , կարգաց և աւանդութեանց հմուտ և անոնց անվթար պահպանման ջերմ նախանձախնդիր էր, և որ առաւել գովելին է, իւր օրով անցած աղգային և քաղաքական ամէն անցքերն ու դէպքերն օրն օրին ի գիր կ'առնուր և կը պահէր . և այսպէս ընդարձակ յիշատակագրեր մթերած էր իւր ութսունամեայ կենաց ընթացքին մէջ՝ ի պատմական կարեւոր տեղեկութեամբ(5):

Աղգային գործոց մէջ ալ ձայն ունէր վերոյիշեալ քահանայից պէս և հետ: Երբ այս հինգ վեց աւագ քահանայք խնդրոյ մը վրայ միաբանէին , Պատրիարքը մտածել կը սկսէր, վասն զի բովանդակ քահանայական դասն և հետեւապէս ժողովուրդն ասոնց ետեւէն կ'երթար: Այսու հանդերձ քանի մ'անգամ Պոլսէն հեռացում էր Տ. Մելքոն, ինչպէս նաեւ իւր երկու որդիքը, Տ. Պաղտատար և Տ. Ստեփան, որք նոյնպէս աղղեցիկ քահանայներ էին:

Իւր վերջին հեռացումը ես ալ կը յիշեմ: Պատճառն ու պարագայները , զորս իրմէ լսած եմ, բաւական հետաքրքրաշարժ են:

1831ին վերջերը Կարապետ Պատրիարք կը հրաժարի ամիրաներուն որոշմամբ, և՛ ըստ հրամանի Բ. Դրան՝ ընդհանուր ժողով կը գումարի նոր Պատրիարքի մ'ընտրութիւն կատարելու համար: Ընդհանուր ժողովը կը բաղկանար Ամիրաներէն , արհեստաւորաց զխաւորներէն , մայրաքաղաքի եկեղեցեաց քարոզիչներէն որքոյժ սակաւաթիւ էին այն ժամանակ , և աւագ ու ամբողջալի քահանայներէն :

Ամիրաներն արդէն համաձայնած էին ընտրելոյն վրայ , որ էր Արմաշու վանահայր և միանգամայն Նիկոմիդիոյ վիճա-

կին առաջնորդ Ստեփաննոս արքեպիսկոպոս, Աղաւնի մականուանեալ:

Եկեղեցականք , ինչպէս նաեւ արհեստապետք , օրուան հօրներուն բերանը կը նայէին սովորաբար , մանաւանդ եթէ ամիրաներուն ամենամեծ մասը կանխաւ համաձայնած լինէին: Արդարութեան պարտք մ'է սակայն ըսել թէ ամիրաներն ալ անխոյժ չէին արտաքին ձեւերն յարգելու: Քահանայից և արհեստապետաց կարծիքը կը հարցնէին: «Տէ՛ր Հայրեր , ո՞վ կայ արժանաւոր մեր եպիսկոպոսներուն մէջ՝ դուք ո՞վ մինասիպ կը տեսնաք:—Դուք գիտէք , ամիրա՛յ , դուք մենէ աղէկ կը ճանչնաք» կը պատասխանէին Տէր Հայրերն ալ: «Է՛յ դուք , էսնա՛ք աղաներ , դուք ո՞վ մինասիպ կը տեսնաք:—Էֆէնտիմ , դուք գիտէք , ձեր հաւնածը մեր ալ ուզածն է:» Յայնժամ մեծ ամիրաներէն մին երկու կամ երեք անուն կ'առաջարկէր. ուրիշ մեծ ամիրայ մ'ալ , ըստ կանխադրոյն որոշման , այն երկու երեք անուններէն մին գովելով , «Է՛ն մինասիպն ան կ'երեւայ ինծի» կ'ըսէր: «Պէլի , ամիրա՛յ , պէլի , ան է է՛ն մինասիպը» կը պատասխանէին միւսներն ալ: Նոյն հաւանողական յայտարարութիւնը կը կրկնէին եկեղեցականք և արհեստապետք , և ընտրուած էր պատրիարքն: Այս էր ընտրութեան սովորական ձեւը:

Սակայն Տ. Մելքոն խտորելով այս կանոնէն , իրենց հարցումով ժամանակ կը համարձակի ընտրելի առաջարկել Ամասիոյ և Մարգարանայ առաջնորդ Յակոբոս եպիսկոպոսն (ապա Յակոբ պատրիարք): «Ո՛չ , ո՛չ ան չըլլար» կը գոչէ անդիէն մեծ ամիրաներն մին բարկութեամբ, և խեղճ քահանային խօսքը բերանը կը մնայ:

Այս համարձակութիւն սուղի կը նստի Տ. Մելքոնին: Քանի մը չաբաթ յետոյ՝ պատճառաւ մ'Ամասիա կը վտարուի , որպէս զի, ինչպէս ըսած էր մեծ ամիրայ մը , «երթայ կարօտն առնէ իր սիրական Յակոբոս եպիսկոպոսէն»:

Կ. Ս. ԻԻԹԻԻԾԵԱՆ

(5) Ո՞ւր կամ որո՞ւ քով մնացած են արդիօր այն շահեկան յիշատակագիրք :

ՈՐԲ ԹՈՉՆԻԿԸ

Մեր տանիրէն բունիկդ առկախ՝
 ձիւ միւ երգես, թռչնիկ անտէր,
 Ու քու լեզուդ կ'ըսես ախ վախ.
 Ձմեռն եկաւ, քու ընկերներ
 Թռան զացին հեռու երկիր,
 Դուն մինակուկ հոս մընացիր:

Եւ անմկութեամբ քի՛ աչ ու ծախ
 Կը նայիս թէ կուգան արդեօք,
 Ու քու լեզուդ կ'ըսես ախ վախ.
 Թռչնիկ, թէպէտ որք եւ անոր՝
 Յուրտին փութին կը համբերես,
 Զի դուն անյայտ չես ինծի պէս:

Սիրար լեցուած՝ յիշեմ յամախ
 Կարիճ մը որ զնաց մեռքէ,
 Ու քեզի պէս կ'ընեմ ախ վախ.
 Երբոր Աստուած զարուն դրկէ,
 Ընկերներդ նորէն կուգան...
 Բայց ա՛յ չի զար իմ սիրական:

Շիրիմն անշուք ծածկէ ցմախ,
 Գնա՛, թռչնիկ, թառիք զբարս,
 Ու քու լեզուդ բռն՝ ախ վախ.
 Որք էք, հոգւոյս հատորն էք ան.
 Ըսէ՛ թէ կարճ է կեանքիս թել,
 Շուտով կ'երթամ գինքն ընդգրկել:

Մ. ԱՃԷՄՆԱՆ

ՆԻՆ ՏՊԱՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԱՆՆԵՐ ԵԶԵՐԳԵՐԸ. — ՊԱՐԱՆՆԵՐԸ ՄԷՋ
 ՊԱՆԱՏԻՆ ՄԷՋ

Կարգացած էք «Իսլանտի ձկնորս»ը,
 Բիէն Լօզիի այն նշանաւոր վէպը, զոր
 վերջերս Բարիզի մէջ ներկայացուցին թա-
 տերախաղի վերածուած: Դժբախտաբար
 մեր թարգմանիչները դեռ չեն ծանօթա-
 ցուցած հայ ընթերցողին՝ այդ երկը, որ
 արդի ֆրանսական գրականութեան հրա-
 շակերաններէն է: Կարծէք սակայն հայե-
 բէնի վերածել այդ ծովերգութիւնը, ուր
 Բիէն Լօզի կը սրտամէ մեզ Մանշի եղերք-
 ներուն վրայ եւ Իսլանտի ջուրերուն մէջ
 անցած պարզ գէպը մը, իր վիպագրի նըր-

բին զգայականութեան բոլոր հրապոյրնե-
 րովը. անուշ աղջկան մը սէքը կոշտ ձըկ-
 նորսի մը համար, ամուսնութիւն մը, բա-
 ժանում մը, եւ ձկնորսին մահը, Ռիկիա-
 նին գիտախուլ ալիքներուն դէմ մըլուած
 յուսահատ սլաքարէ մը ետքը: ահա բո-
 լոր պատմութիւնը, բայց այս ամենը ի
 յայտ բերուած վաւռուկ ու ախուր ե-
 րանգներով, դուրգուրանքով, բանաստեղ-
 ծութեամբ:

... Ու կարդալով նորէն այդ վէպը, իմ
 ալ մտքիս մէջ կ'արթննայ Մանշի եղերք-
 ներուն յիշատակը: 1883ի օգոստոսին էր.
 Երկու հայ ընկերներու հետ Լիւք սիւռ.
 Մէն գացեր էինք, Մանշի վրայ, մուռնալ
 Բարիզի ահնդոտ գործունէութիւնն ու
 ժխորը: Ընկերներէս մէկը հարուստ վա-
 ճառական մըն էր, ո՛չ այն Հայերէն ու-
 րոնք Եւրոպա հաստատուած են իրենց
 հաճոյքին համար միայն, իրենց ծագումը
 մոռցած գրեթէ, խուսափելով իրենց ազ-
 գակիցներէն եւ վախճալով որ օր մը ա-
 նոնցմէ մէկը իրենց դրամին կարօտ կ'ըլ-
 լայ. ինք՝ կը փնտռէր միշտ Հայերու ըն-
 կերութիւնը, կարօտ ուսանողներ կ'որո-
 նէր անոնց օգնութեան հասնելու համար,
 Բարիզի կեանքովը զբաղելով այնչափ ուր-
 չափ իր տոհմակիցներուն կեանքովը, մեր
 գրականութեան տեղեկանալու հետամուտ
 միշտ: Միւս ընկերս, նոյն զգացումներով
 տագորուած, վաղեմի աշակերտ մըն էր
 Վինետիկի Ռաֆայէլեան վարժարանին,
 բաւական տարիներէ ի վեր Բարիզ հաս-
 տատուած:

Երեքս ալ պէտք ունէինք հանդիսութիւն,
 մանաւանդ մեր հարուստ բարեկամը, որ
 գժբախտաբար առողջութեան տեսակէ-
 տով այնչափ հարուստ չէր, թոքերը վա-
 րակուած արգէն Քոխի միքրոպներէն:
 Հոն, այդ եղերքներուն վրայ, քսան օրեր
 անցուցինք, կապտորակ ծովուն գիմայ,
 լիաթոք ծծելով Ուիլիանին կապուորիչ հիւ-
 սիսակը:

Լիւք սիւռ Մէն աննշան գիւղ մըն է
 Գալվատօսի նահանգին մէջ. ձմեռը գրեթէ
 թափուր, իսկ տառաւձ կենդանութեամբ
 լի, շնորհիւ Բարիզիցիներու որոնք հոն
 կ'երթան ծով մասնել: Ամբողջ բանաստեղ-

ծովթիւն մը, . . այդ լողանքը. երեւակա-
յեցէք բացօթեայ բաղնիք մը, ընդարձակ,
ընդարձակ, այնչափ որչափ տեղ որ ձեր
աչքը կ'ընդգրկէ հորիզոնին վրայ . այրեր
և կիներ, ամեն տարբէ, ամեն դասա-
կարգէ, ծով կը մտնեն հոն, ումանք՝ ճար-
տար լողացողներ՝ խիզախ ու յանդուգն
միրճելով ջուրին մէջ, ուրիշներ դողդո-
ջուն, առաջնորդներու թելին վստահա-
ցած՝ լողալու ճիգերով. լողանքի յատուկ
հագուստներով ծածկուած ամենքն ալ,
կիները նուազ հոլանի կուրծքերով քան
պարահանդէսներու մէջ, քորսէի կեղծիքնե-
րէն մերկացած սակայն, և զրկուած ա-
նոր հրապոյրներէն ալ:

Ու մենք, եղբրքին վրայէն, կը դի-
տէինք բոլոր այդ Բարիպիները, մեծ մա-
սը նիհար, հիւանդկախ, որ եկեր էին
Մանչի ջուրերուն մէջ կազդոյր փնտռել,
քիչ մը արիւն իրենց երակներուն համար,
քիչ մը ուժ իրենց տկար ջիւղերուն. եւ
տեղացիներուն կը բազդատէինք զիրենք,
խեղճ ձկնորսներուն ու գեղջուկներուն,
որոնց կենսաբոյր առուգութիւնն հակա-
պատկեր մըն էր բարեկեցիկ այդ տխրոյ
մարմիններուն:

Ամբողջ օրեր կ'անցունէինք հոն, այդ ե-
ղբրներուն վրայ, ժայռերուն մօտ, ծո-
վուն մէջէն քալելով երբ տեղի կուտային
ջուրերը, թաց աւազին վրայէն զոր քիչ
մը ետքը ալիքները պիտի ողողէին նորէն.
մեր ոտքերուն տակ խլեակները ովկիա-
նին, վարեխն ու դալախաղը ու ոտորէի
կեղեւները, և մերթ փոքրիկ ձուկերն ալ
աւազին մէջ անսուալ:

Ու կը դիտէինք Ովկիանը, աղաւթ արձակ
անծայրածիր, որ անձնամատոյց կնկան
մը պէս դիւրահաճ, կ'ընդունէր երկնքին
բոլոր շողերը. տեղատուութիւնը այդ ջու-
րերուն՝ որոնք կը սկսէին քաշուիլ, քաշ-
ուիլ, հեռանալ եղբրքներէն, և մակըն-
թացութիւնը որով դարձեալ կուգային,
ծածանուտ ծալ ի ծալ ծփանքով մը, մեղ-
մօրօր երաժշտութեան մը հմայքներով,
տակաւ տակաւ մօտենալով ամուսնիքին՝
նորէն շաղկելու անոնց իրենց սիրարկու
նախկին գգուանքները:

Տաս տարիներ անցած են անկէ ի վեր

և Մանչի եղբրքներուն յիշատակին հետ
կը ներկայանայ մտքիս՝ անմոռաց յիշա-
տակը թնքախտաւոր վաղամեա բարեկա-
միս ալ, որուն հետ այնքան ժամեր, արեւ
արեգակին կամ լուսնի լուսին, հիացումով
վայելած ենք անհուն ջուրերուն մեծա-
փառ այն տեսիլը. հիմա, իր աճիւնները
միայն կը մնան մեզի, Բէռ Լաչէզի գե-
րեզմանատան մէջ, օտար հողի վրայ, ի-
րեն պէս մեծ հողիի մը, Գրիգոր Օտեանի
գերեզմանին մօտիկ, որուն վերջին տա-
րիներուն՝ անձնուէր բարեկամն ու սրբ-
տակիցն եղած էր:

* * *

Ներեցէք ինծի որ քիչ մըն ալ Մանչի
եղբրքէն Բարիպ անցնիմ և խօսիմ ձեզ. . .
Ֆրանսական Հանրապետութեան Նախա-
գահին պարահանդէսներուն վրայ, թէեւ
ա՛լ անցած ըլլայ Բարեկենդանի եղանա-
կը: Սակայն արդարացում մը ունիմ, Տի-
կին Ժիւլ Կռէվիի մահը, և այս արդարա-
ցումը պիտի ըմբռնէք իսկոյն եթէ ըսեմ
ձեզի թէ նախորդ Նախագահուհի Տիկին
Կռէվիի պարահանդէսներէն մէկուն վրայ
է խնդիրը, 1884ի սկիզբները արուած է-
լիլդէի պալատին մէջ:

Ես ալ յաջողեր էի հրաւիրագիր մը
ձեռք ձգել և ներկայ գտնուիլ այդ երե-
կոյթին. այդ հանդէսներուն գերազարդէս
ժողովրդական հանգամանքը կը բացատրէ
համեստ ուսանողի մը եղած այս պատիւը:

Երբեք չեմ մոռնար վրդովումը զոր ու-
նեցայ երբ վեր կ'ելլէի Էլիզէի պալատին
սանդուղիներէն: Բարիպ ապրող հայ ուսա-
նողները այնքան քիչ ընտանեկան յարա-
բերութիւններ կը հաստատեն հոն, որ
երբ իրենց սովորական շրջանակներէն
դուրս կ'ելլեն և ընկերութեան մէջ կը
մտնեն, տեսակ մը յուզում, չիտիւմ կը
համակէ զիրենք. իրենց աննշան կեան
քին մէջ, Համալսարանը, հանրային սպ-
րահանդէսները, թատրոնները, սրճանոց-
ները կը յաճախեն, և աւելի բարձր մի-
ջավայրներու մէջ օտար կը զգան իրենք
զիրենք:

Սրտատրուի ուրեմն՝ ներս մտայ մեծ
սրահէն, ուր Ժիւլ Կռէվի իր հիւրերը կ'ըն-

դուռներ ոտքի վրայ: Միւս հրաւիրեալներուն օրինակին հետեւելով մօտեցայ Հանրապետութեան Նախագահին, խոտարհութիւն մը ըրի որուն պատասխանեց զլիսութեւ չարժումով, և առաջացայ դէպ ի երկրորդ սրահը, ուր կանգ առի և դռնաբանով դուռնէն դիտեցի բոլոր այդ անձնաւորութիւնները, որոնք Ֆրանսան կը ներկայացնէին. Ժիւլ Կռէվին, համակրելի ծերուկ մը, բարի գէմբով, որ ժպտաներ կը շաշկէր աջ և ձախ. Տիկին Կռէվին, համեստ գէմբ մը ան ալ անցած գեղեցկութեան մը բեկորները պահելով դեռ. իրենց աղջիկը, Տիկին Ուիլսօնը, աննշան դիմագծութիւն մը, քաղքենի կնկան ամենէն հասարակ տեսակէն. և անոնց ետեւ «փեսան», Պ. Ուիլսօնը, որուն աղմկալի գործունէութիւնը այնքան տխուր հետեւանքի յանդեպու ետքը. Ֆրէսինէն, Ֆէրրին, Պրիսօնը, այն ատենուան նախարարները, Նախագահին զինուորական տան անդամները իրենց պաշտօնը զեղաչուք համապետաներով, և հրաւիրեալներէն անոնք որ մակրիմներն էին էլիզէի շրջանակին:

Վարը, մեծատարած սրահի մը մէջ հաւաքուած էին պարտքները, դրամի, պաշտօնէութեան, սաղանդի ներկայացուցիչներ, որոնց մէջ ի վուր պիտի որոնէիր բուն ազնուապետական դատակարարը, որ այնչափ կզղիացած կ'ապրի Ֆօպուս Սէն Ժէոմէնի մէջ: Նուադախումբը կը հնչէր, ու պարերը կը յաջորդէին իրարու անհատում զուարթութեան մը հոտանքին մէջ: Ս. ի, այդ Բարիզցիները. ինչ կատարի ցնծամոյսներ, մանաւանդ երբ զբարձրագոյն կ'ուղեն: Նրեափոխաններ, խորհրդականներ, բարձրագոյն պաշտօնեաներ պարախումբերուն մէջ, մեծ մասը տարիքոտ, աղէրեկ մաղերով, և անոնց բով երիտասարդ տարրն ալ, Ֆրանսայի ազգական. ու կրնիր, իրենց փառաւոր արդուգարդներով յաղթական, և անդիմադրելի՝ իրենց սիրտովն ինքնազնկերով ու շնորհներով, կը սուրային անոնց թեւերուն մէջ, պէտքովն արուեստին բոլոր նորագոյնութիւնն ի յայտ բերելով: Ամենուն մէջ, աղջիկները միայն տեսակ մը

վերապահումով կը վարուէին, ֆրանսացի աղջկան կեղծ վերապահումը, իրենց ճերմակ կամ վարդագոյն շրջագոյններուն մէջ անապակ անմեղութեան հովերով, սակաւապետ շարժումներով, համեստութեան բոլոր պահանջումներուն կոյր հպատակումով իրենց մայրերուն ակնարկին տակ դողողուն, թաքուն հրայրքներու բոլոր փողփողումը սակայն իրենց չարածճի աշուղներուն մէջ:

Պարասրահէն անցայ չքասեղանի սրահը, բայց ինչ յուսախաբութիւն: Ծշմարիտ յարձակում մը, անօթիներու, ծաւալներու կողմէ: Բազմաթիւ մարդեր և կիներ հաւաքուած, ընդարձակ սեղանին շուրջը, գրեթէ պաշարած վայն. դաւաթներ որք մէկ ունեւով կը պարպուին, բերաններ որք անխոնջ կ'երերան, ակռաներու փութկոտ գործունէութիւն մը, շուտ հատցներու և նորէն սկսելու տենջանքին արտայայտութիւնը բոլոր գէմբերուն վրայ: Ծշմարտապէս ժողովրդական հրաւիրեալներ, Պարոն Նախագահին այդ շտեմ, ծակաչք կոչնականներու խումբը...:

Պարերը տեսցին մինչեւ պառօտ, իսկ չքասեղաններու ծառաները շատ աւելի կանուխ դադրեցան սպասարկելէ. և, իմ մասիս, առանց ընթրել կարենալու մեկնեցայ էլիզէի պալատէն և այդ անօթի դարձը պարահանգէսէն՝ շատ աւելի ճշգրիտ գաղափար մը տուաւ ինծի Կռէվին կծծիւթեան վրայ, քան այն հարկաւոր հեղեական քմահաճ յօդուածները, զորս «Ֆիկառօ»ի սրամիտ երգիծաբանը՝ վաղամեռ Սելէո Միլյօն, կը հրատարարակէր պարբերաբար Հանրապետութեան նախկին Նախագահին չափազանցուած խնայասիրութեան դէմ:

Ն. երբ վար կ'իջնէի էլիզէի սանդուղներէն, կը մտածէի չմտած երկչոտ վերելքիս. հիմա, չափ բան պակասած էր ակնածանքի զգացումէն որով սողորուած էի առաջին պահուն, և կը զգայի թէ այդ երեկոյթը, մօտէն ճանցունելով ինծի հանրապետականներու ընտրեալագոյն ընկերութիւնը, տարօրինակ սպաւորութիւն մը թողուցեր էր վրաս, ակնկալածէս բուրովին տարբեր:

ՀՐԱՆՏ ԱՍԱՏՈՒՐ

ԲԱՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ⁽¹⁾

Բ

Բանասիրութեան յայտնութեանց առջև դժկամակ և արհամարհոտ հանդիսատես մը չեն կրնար լինել ամէնէն աւելի ստեղծող մտքերն անգամ, մանաւանդ երբ բանասիրութիւնն գրական ա՛յս կամ այն դպրոցի և ուղղութեան դէմ յարձակումներ ընելու թեթեւամիտ փորձերէն անկախ և տիրապէս գիտական անտարբերութեամբ շարունակէ իւր ճամբան: Բայց որովհետեւ բանասիրին գործն հնախօսութիւն մը չէ միայն, կարող է նա չըջափիւռ ազգեցութիւն մը տարածել նաեւ ներկային վրայ: Ստուգիւ՝ եթէ բանասիրականին հետեւողք դպրոցական կամ սովետական գնացք մը չ'առնուն և հետադասութեանց խաղաղիկ դաշտը կռուոյ վայր մը չը դարձունեն՝ տարակոյս չկայ թէ միշտ ծանրութեան կեդրոն մը պիտի յաջողին շինել իրենց չուրջ և միջավայրի մը զօրաւոր ազդակը լինել: Նորափետուր և երբեմն ալ յանդուգն մտաց թըռիչներն արգիլելու համար յանուն բանասիրութեան սաստ և սպառնալիք տեղալ և դատափետել և այլն գծուծ իմաստակի մը բարացուցականն է այն և ոչ իմաստասիրի, զի բանասէրն յառաջ քան զամենայն պարտի լինել իմաստասէր: Ըստ այսմ պէտք չէ մոռնալ թէ գրագէտն ալ ունի իւր անկապտելի իրաւունքներն՝ որոց մասին հարկ չէ՛ք համարիր երկայնել աստէն մեր խօսքը. ի կամս գրագիտին է անշուշտ չգործածել այս ինչ բառն կամ այն ինչ ասացուածք՝ զոր սակայն բանասէրն կը փութայ յանձնարարել, միանգամայն ազատ է նա գոյն՝ հիւթ և ջիղ դնելու այն բառերուն մէջ՝ զորս բանասէրն գուցէ լեզուի բուսականութեան մէկ բրածոյ կտորն կը համարի, ուստի այս փոփոխակի պահանջումներուն մէջ ա՛յն-

չափ միայն օրէն է յառաջ երթալ որչափ կը ներէ ընդհանուր բացատրութեանց և հայ լեզուի ողին. պէտք է մանաւանդ զգուշանալ հնագոյն դրոշմներն իսկ եղծանելու յաւակնութենէն՝ զոր մեր մէջ գրագէտք ոմանք յո՛ւպէտ յո՛ւկամ կը բերեն յանձին: Ի՞նչ կը մնայ ուրեմն ընել հայ բանասիրին գրական լեզուի մը ամենորեայ փթթումներուն հանդէպ: Եթէ կ'ուզէ լաւ ներգործութիւն մ'ընել՝ կը պահանջուի որ գրական աշխատութեանց փորձէն ինքն իսկ անցած լինի արտադրելու պայմաններով, առանց որոյ՝ այսինքն առանց գրական տաղանդ մ'ունենալու՝ օրէնքի մը ցամաք տրամադրութիւններովն զո՛ւր պիտի ջանայ խափանել հանճարի սլացքը, զի իբրեւ Պոպլիտոս չըջանակ մը գծելով՝ գիւրին չէ ստիպաւ վերջին բառը պահանջել յաղթասէր մըտքէն: Բանասիրին անկ է՝ ըստ մեզ՝ եթէ չենք սխալիր՝ գործնականապէս լեզուի տարադարձ աճումներն ի բաց յօտել, այսինքն ինչ որ անօգուտ է ըստ ձեւոյն, և զգուշացնել որ գրգռեալ երեւակայութիւն և քմահաճոյք անպատեհ և աւելորդ շուայլումներով չխանգարեն լեզուին տնտեսագիտական վիճակը: Կարեւոր չէ՛ արդեօք միանգամ ընդ միշտ դիտել տալ աստ թէ ընդհանրապէս կը ժպտի մեզ գաղափարն այն՝ ըստ որում անպայման՝ ճոխացում մը կը կարծուի տալ լեզուին նորահնար ձեւերու և նորալուր բառերու կիրառութեամբ. սակայն այդ հանգամանօք չէ՛ որ լեզուի մը մշակութիւնն տեղի կ'ունենայ. ըստ լեզուաբան գիտնոց՝ մարդկային ազգին իւրաքանչիւր ցեղի նախնական բարբառն ցոյց տուած է երբեմն ձեւերու բազմայեղանակ հարստութիւններ, բայց ապա խորհրդածութիւնն՝ մտքի հանդարտ մակարդակն վրայ հասնելով բոլորովին ժխտական բան մը յարդիւնս բերած է, այսինքն թէ լեզուն յղկուելով կամ կոկոռելով յընթացս դարուց կարելի է ըսել թէ աղքատացած իսկ է: Այսպիսի չըջանէ մը անցած և մատենագրական բարձրութեանց սաւառնումներէն՝ դեռ նոր յոգնած լեզու մ'ունինք այսօր. դրաբարն է այն, որ զգրագէտն կրնայ գոհացնել ա-

(1) Ծ. Խ.—Այս յօդուածի աւաջին մասն ճրատարակուեցաւ Փետրուար 6ի ՄԱՍԻՍին մէջ (Խ. —):

ոացուածոց անակնկալ մատուցումներով և բարդումներու գեղեցիկ յօրինուածութեամբ՝ որ —անցողակի ըսելով— ռամկական կամ ժողովրդային չէ բոլորովին, ինչպէս կ'ուզեն հռչակել ոմանք։ Այս դիտողութիւններն գուցէ այնպէս երեւին թէ մեր նիւթին հետ չունին ներքին կապ մը, բայց մեր նպատակն է՝ ինչպէս արդէն ըսինք՝ բանասէրն ու գրագէտը ո՛չ ներհակակիր և թշնամական այլ հաշտ գիրքի մը մէջ տեսնել, և կը հաւատանք թէ երկու խումբերուն ներողամտութիւնն ու աջակցութիւնը լեզուին զարգացման և զրականութեան յառաջացման նպատակուր գործունէութիւն մը կրնայ ընձեռել։ Թէ այս ուղղութեամբ դժուարին պիտի չլինի մի օր նոր հայերէնին տալ քերականական չափակցութիւն մը և ճոխ միակերպութիւն՝ հաւաստի կը թուի մեզ, սակայն բռնի պահանջումներ ապարդիւն կրնան մնալ տակաւին, ցորչափ մանաւանդ ա՛յնքան հակառակամարտ ճաշակով և անձնական ընտրութեամբ գրեն տնոնք անգամ՝ որք իբրեւ բանասէրներ աւելի պէտք ունին զիրար հասկնալու լիզուի խնդրոց մասին։

Ուրիշ ժամանակի թողլով գրել զայդմանէ, կը փութանք դառնալ մեր նպատակին՝ որ է բանասիրական աշխատութեանց համետ մղում մը տալու կարեւորութիւնն մատնանիլ ընել։

Ամէն ոք գիտէ թէ մարգարեական գիտութիւնը զգալապէս յառաջ բերած են այժմ մտածութեանց ա՛յս կամ այն յեղանակաւորումներն, և ինչ որ երբեմն անձուկ հմտութեան մը կամ նախանձախնդրութեան արդիւնք էր՝ այլ եւս լուծած է իւր պատրանքն ու կորուսած իւր հրապոյրը։ Առանց բանասիրական սկզբբանց՝ իւրաքանչիւր ազգ նախալեզուի մ'իրաւունքն կը վերապահէր իւր բարբառոյն, ո՛չ իսկ փսամետիկեան փորձ մ'ըրած լինելով թէ ո՛ր լեզուն կարելի է համարիլ հնագոյնն և նախնականն ի մէջ լեզուաց։ Կը սիրենք հաւանիլ երբ մեր նախնի քերականը «համեզ» կը կոչեն զհայ լեզուն, բայց նոցանէ ո՛չ միոյն ստուգաբանական գիտութեանն կրնանք համա-

կերպիլ թէ իսկ «Սահմանաց դրքի» հեղինակն «մարմին և ընթարմ» բառերու միջև խորին ազգակցութիւն մը հնարի ցոյց տալ մեզ։ Այսուհետեւ «Նաւասարդն» ու «Ակոռին, ուղտն ու աղանին, ճպուռն ու վազը» իրենց կարծեցեալ նշանակութիւններով չեն կրնար հետաքրքրել զմեզ։ Արդի «բանասիրութիւնն իւր քննական համարձակութեամբն կը թելադրէ մեզ յայտարարել թէ ո՛չ երբեք հայագէտ լինելով հաւասար մեր նախնի թարգմանչաց և քերականաց՝ բառերու իմացման մէջ անհնար չէ որ յետո թողունք վանոնք՝ որդիական մեծարանք մը միշտ պարտելով իրենց. «Ո՛չ մի հելլենագէտ կրնայ պարծիլ, կ'ըսէ Ուրնան, թէ գիտէ զՅունարէնն Պղատոնի մը հաւասար, և սակայն ո՛վ իբր հաւաստիք կը նկատէ ստուգաբանութիւններն կամ՝ լաւ եւս է ըսել՝ բառախաղերն Կրատիչի և Փեղրոսի, ո՞ր լատինագէտն խիղճ կ'ընէ սրբագրելու Վարդոնի՝ Կիկերոնի և Աւրոս-Գելլոսի ստուգաբանութիւններն»։ Բանասիրական այդ յանդգնութիւնն առաւել արդարանալի կը գտնէ մանաւանդ արեւելեան լեզուաց համար մեր յիշած հեղինակը։ Գրական այսօրինակ խստութեամբ և ճշգրտութեամբ եթէ կատարուին հայերէն բանասիրութեան խուզարկութիւնք, սահմային հին անցքերու և ազգապրականն նկատմամբ, ո՛վ գիտէ ինչ լա՛ն և լուսաւոր հեղուածներով ծրագրեալ ի յարդ և ի կերպարան պիտի գայ աղօտ և միգատար թանձրացած հնութիւն մը։

Տակաւին անորոշ գիծեր կը չօգտինք եւեթ, բայց հաճոյական է տեսնել թէ հետազօտ կամքն արթնցած է ի մեզ և խանդակաթ գորովայ մը զեղումներով կը փարինք այն լեզուին՝ որ՝ թէ ո՛չ Դրախտին՝ գէթ Եդեմամերձ վայրերու մէջ հնչած է, և հինաւուրց գոյութեան մը անհերքելի վկայութիւնն պիտի հանդիսանայ յաւէտ։

Լեզուին ուսումնասիրութիւնն զլիսաւորաբար հայերէն բանասիրութեան ընդարձակ խարխիւը պարտի կազմել և չենք երկբայիլ՝ թէ այդ հիման վրայ մեծավայելուչ չէնք մը կառուցանելու համար

երկարաժամանակեայ անձանձիր աշխատութեանց պէտք կայ, զի ո՛չ ոք անձին առանձին և ոչ իսկ զօրաւոր ոյժերով օժտեալ դարու մը գործ է ի գլուխ հանել այդօրինակ բաղմատականջ վաստակ մը՝ որ սաղմնային վիճակի մը մէջ կը գտնուի դեռ. այլ հարկ է ձեռնարկել վերջապէս, և պիտի տեսնենք թէ անհատներ չեն պակսիր մեր մէջ՝ որ պատրաստ առաջններ բերեն: Ո՞վ չէ կարգացած Նորայր Բիւզանդացուն «Բառաքնութիւն»ը և պագած հայ գրչագրաց բազմատեսակ սխալներն ուղղագրելու և բառերու նշանակութիւններն իսկ ճշգրտելու պէտքը. ո՞վ չէ ըմբռնած «Հնտերոպական Նախակերպ» ողբացեալ հեղինակին հետ թէ բաղդատական լեզուաբանութեան ուսումն մեծ կարեւորութիւն ունի ի մասին Հայերէնի ծագմանն և հնութեան. ո՞վ չէ համակրած Հինքեարպէյէնտեանի «Ստուգաբանական» պիւտերուն և հնարիմաց հանգիստութեանց դարձադարձ խաղերուն: Այս երկասիրութիւնք արդարեւ առաւել կամ նուազ՝ մեր լեզուին ուսումնասիրութեան նախաշաւիղը ցոյց կուտան, երբ մանաւանդ այն կամայական ըմբռնումներն՝ որ բնականաբար նոր ճամբայ մը բացող ուղեղներու մէջ կը բուսնին՝ գիտական սեղմումներ կրեն հետզհետէ: Բե՛ր արդ, մեր նախնեաց գրուածոց մասին՝ բառերու և իմաստից ճշգրտութեան գեղեցիկ ձեռնարկն, զոր քննասէրը Էռաւտի մը սրամտութեամբ կը յաջողի կատարել՝ որպէս թէ տպագրական հասարակ փորձ մը սրբագրելը՝ միթէ գնահատելի ծառայութիւն մը չէ՞ ի պէտս մաքրութեան լեզուին և յուզող իմացումն հայ մատենագրաց: Գալով լեզուաց համեմատութեամբ կարեւոր նիւթեր յօգուտ մեր լեզուին ի կիր արկանելու աշխատութեան՝ հարկ է խոստովանել թէ բանասիրական բարձրագոյն ուսմանց կը կարծիք, և ո՛չ ոք ի մէնջ (թերեւս բացառութիւն մ'եղաւ Հ. Տէրվիշեան) այո՛, ո՛չ ոք այդ պատրաստութիւն ունի այսօր, սակայն և այնպէս անկարելի չէ տեսնել մի օր բեմ մը՝ ուր հայերէն լեզուն ուսումնասիրուի լեզուաբանական գիտութեան պայմաններ

րով և այդ բեմն իւր հետեւող և ունկընդիր մասն իսկ ունենայ: Անձկանօք սպասելով ողջունելու այն օրը՝ որ մեր մտաւորական կեանքին վրայ խորապէս պիտի ազդէ, պարտինք գոհանալ առ այժմ՝ եւրոպացի գիտնոց այն նորագոյն ուսումնասիրութեամբ՝ յորոց դժուարին չէ օգտիլն քանի մը հին լեզուաց տարրական ծանօթութեանց տեղեակ եղող անձանց համար:

Չմոռնանք նաեւ բուն մեր մատենագրութեան նկատմամբ յառաջ վարելի հետազոտութեանց ո՛չ նուազ կարեւորութիւնը: Այդ մասին կրնայինք նշանակել ինչ ինչ մենագրական ուսումնասիրութիւններ, զոր օրինակ զՊորենայեոյ՝ զԱզաթանգեղոսէ և զայլ մատենագրաց, սակայն մեր դիտաւորութենէն դուրս է հայ բանասիրութեան պատմութիւն ընել (որ գոյութիւն չունի դեռ), այլ կ'ուզենք պէտք մը չեղտել ուստի զանց կ'ընենք յիշատակել ա՛յս կամ ա՛յն գրուածներն, միայն փափաքելով որ ոմանց մէջ հմտութեան նուազ թերութիւն տեսնուի և ոմանց մէջ եկեղեցական տեսութիւններէ չտարութեամբ ուղղամիտ քննութիւն մը:

Զիա՛րդ և իցէ. ո՛չ ումեք իրաւունք կը տրուի մեր մէջ ցարդ ի վեր երեւցած բանասիրական գրուածոց կամ լեզուաբանական փորձերու արհամարհանօք նայիլ, այլ արժան է իւր անփառունակ և թաքուն վիճակէն հանելով հայ բանասիրութիւնն ցուցանել յարեւու, և ինչ որ մանաւանդ կարեւորագոյնն է՝ զգացնել հայ լեզուի աշխատաւորաց թէ իսկապէս անհրաժեշտ է իրենց այդ ուսման պարապումը որպէս և զրապէտ դասուն, բայց որպէս զի հայ բանասիրութեան վերաբերեալ խնդրոց հետեւիլն դիւրին լինի մեզ ամենուս, կ'առաջարկենք ազգային բանասիրաց՝ հրատարակել մասնաւոր Հանդէս մը, որ թէ՛ լեզուի և թէ՛ մատենագրութեան մասին ծանօթացնէ զընթերցողս կարեւորագոյն գիտոց՝ երկասիրութեանց՝ քննական արդեանց և այլն:

Արդարեւ «Հանդէս Ամսօրեայ», «Բազմավէպ», «Արարատ», «Մուրճ», «Արաքս», «Պատկեր» և դեռ քանի հանդէսք և օրա-

թերթը՝ յաճախ կամ մերթ ընդ մերթ իրենց մէջ կը հիւրընկալեն բանասիրական յօդուածներ կամ գրուածներ, բայց այդ բանասիրական ցիրուցան ոյժերն ի մի հաւաքելու և ամէն նոր ծանօթութիւններ ընթերցողաց դիւրապատրաստ ընծայելու համար մասնաւոր հանգիսի մը պէտքը անուրանալի է։ Այդպիսի հանգէս մը իւր զոյութիւնն ու համբաւն անշուշտ կրնայ երաշխաւորել, եթէ Տ. Հիւնքեալպէյէնեանի, Հ. Պարոնեանի, Նորայրի, Գարապաշեանի, Հ. Սարգիսեանի, Հ. Տաշեանի, Միսաքեանի, Մալխասեանի, Իւթիւհեանի, Պէրպէրեանի և այլոց աշխատակցութիւնը նուիրուին այնմ. ահա պայմանն՝ ըստ մեզ՝ որ կրնայ ի դէպ դալ հայ բանասիրութեան այժմեան պահանջումներուն և զարգացման նպաստել։

Արմաշ

ԵՂԻՇԷ Վ. ԴՈՒՐԵԱՆ

ԶԱՏԿԻ ԼԱԹԵՐ

Սկիւտարու Բարեսիրաց Խնամակալութիւնը, իր պաշտօնավարութեան երրորդ տարւոյն համարատուութիւնը մատուցանելով Ս. Խաչի Թաղ. Խորհրդոյ, երեք տարիներու հաշիւներն ալ կը յիշեցնէ։ Ատ տեղեկագրէն, հարեւանցի նայուածքով, կը տեսնուի որ Խնամակալութիւնը ամէն Զատիկի՝ մօտ 100 ոսկւոյ գումարով մը հագուեցուցած է թաղին դպրոցին աղքատիկ ուսանողները։

Սկզբունքով հաշտ չեմ բնաւ ա՛ն դա՝ զափարին՝ որով աղքատիկ ուսանողներու իրելու նպատակով ըմբռնուին քանի մը ձեռք լաթ ու քանի մը զոյգ ալ կոշիկներ։ Ընդհակառակն, փափաքելին այն է որ մեր ծնողը, չքաւորներն ալ իրենց հեղինակութիւնը կարենան պահել իրենց զաւկըներու վրայ, ու, փոխադարձ, մանկիկներն ալ իրենց թարմ օրերէն սկսեալ և կեղեցիներու մէջ «քարոզուած» մարդկային առաքինութեան մը շնորհիւ, զատկական լաթերու վրայ չտեսնեն օտար խնամք, օտար ձեռքեր, որոնք լռելեայն յանդիմանութիւններ են անոնց, որոնց

աղիքներուն հետ կը կապէ գիրենք բնութիւնը իր ամենագոր ձեռքերով։ Եւ սակայն փորձառութիւնը ուսուցած է մեզի որ դա՛ղափար մը ո՛րչափ գեղանի ըլլայ ինքն ըստ ինքեան և հրապուրիչ, իր ծընած ու քարոզուած օրէն՝ հազիւ տարիներ ետքը գործադրութեան կուգայ։ Եւ այսպէս, վարդապետին քարոզը, գրչին աղաղակը չպիտի զօրեն մէկ ցնցմամբ գինեսունէն դուրս քաշել հայր մը, որ, տարիներու յուր վարժութեամբ, կ'երթայ հոն ամէն իրիկուն և քրտինքով ձեռք բերուած դրամները կը զլորէ գինետան «թէգկեա՛հ»ին վրայ, և հոն, տակաւններուն տակ թողած մարդկային ամէն բան, ճորձարալով, պատէ պատ խաբխախելով հասնի մտնէ տնակէ մը ներս։ Եւ քանի որ բնութիւնը, իր հրճուանքի ժամերուն, ատ չարաշուք կեանքերու վրայ պիտի արձակէ բողբոջներ, շէնքի մը քանդուքներուն վրայ երերացող կանաչին ու ծաղիկներուն պէս, — հոն սիրուն աղջիկ, աստի՛ն աղւորիկ մանչուկ մը, տա՛ խաբտեալ, ա՛ն թխադէմ, Զատիկն ու Ծնունդն ալ մեր աչքի առջեւ պիտի պարզեն ցընցոտիներու տակ անպատասպար պատըսպարուած մատաղօրեայ կեանքեր։ Հայրը փճացած բան մը չգգար, և մայրն ալ շատ անգամ անբաւական է բան մը ընելու իր հերոսական ջանքերով։ Իհ, ո՞վ պիտի նայի ատոնց, — աս աղաղակն է որ կը վրդովէ իտէական աշխարհի բնակիչները և ծանր խորշակի մը պէս կ'երեւցնէ զանոնք։ Հոս տեղ կը ծնի մեր բարոյական պարտականութիւնը ատ հէք ըստեղծուածներու համար, որոնք մեր շուրջը կը թրթռան, կը թեւթռան՝ փետուրները ծայրատուած թռչնոյ անմեղ ձագուկներու պէս։ Հէնց ատ պարտքն է ահա զոր կատարած է մեր Բարեսիրացը ամէն Զատիկի, որ ատեն սովորաբար կ'գգեստաւորին մանկիկները նոր լաթերով։

Բայց, ինչպէս ուրիշ առթիւ դիտած եմ, լաթերն հագցնելով ատ մանրիկներուն՝ շարեւ զանոնք մեր եկեղեցիներու մէջ և քարոզչի մը ձայնով ալ նշանակել ի տես ժողովրդեան, իսպառ անտեղի է։ Կրնայ ծանուցուիլ թէ ի՛նչ նպատակ է

է աղքատիկ ուսանողներու, բայց երբեք ներելի չէ մուրացկանի նշան մը դնել տըրուած լաթերուն ու հագնող մանկիկաներուն վրայ : «Ի ձայն փողի» հռչակուած առաքինութիւնը կը դադրի առաքինութիւն ըլլալէ, և ներքին դոհունակութիւնը, որ գերագոյն զարճքն է իր քողքովուած համեստութեանը մէջ, ալ բան մըն ալ չազգեր մեցի : Առ ըմբռնումով՝ ցարդ ի գործ դրուած աւանդական զրուիւնը պէտք է քանդել հիմէն : Թէ այսպէս պիտի ընէ՞ մեր Բարեսիրացը, բնաւ կասկած չունիմ իր համեստութեանը վրայ :

Եւ սակայն Բարեսիրացը, որ հաշտ է սկզբամբ իր գործոց համեստութեանը հետ, աղքատիկ դպրոցականներու լաթին հետ զուգորդած է անոնց դպրոցական պէտքերու մատակարարութիւնը . թուղթ կուտայ, գրիչ կուտայ, դասագիրք կուտայ : Ուսանողները գիտեն թէ ի՞նչ դրժուարութիւն է երբ ձեռքերդ ճակտիդ դըրած, դասագիրքը չես ունենար առջեւդ և թուղթը կը պակսի դարակիդ մէջ : Դպրոցին օրէնքը ետ մնացողին պատիժ ու անպատուութիւն կը սահմանէ, դու լաւ դիտես ատիկայ, ուսնիլ կը սիրես, ու միջոցները կը պակսին քեզի : Տեսնուած են պատուաւինդիւր ուսանողներ, որ, ճնշուած դպրոցի օրըստօրէական պէտքերու տակ, և ուզելով պարտկել չքաւորութիւն մը, առած քալած են դպրոցէ և նետուած են անչքութեան մէջ, ուր մութը կը թանձրանայ երթալով անտառի մը գէպի խորը ծանրացած ստուերներուն պէս : Դէմքեր տեսայ, ատ չքաւորութենէն կորսուած դէմքեր, զորս գուցէ յաւիտեան չկրնամ մոռնալ ան մոռնապատ եռացումին մէջ, ուր փրկանքը կորուստէն տարբեր բան մը չէ :

Իրաւ կ'ըսեմ, ինծի միշտ առանձին հաճոյք մը եղած է անձամբ գիմել մեր Բարեսիրացին ու գիրք, թուղթ խնդրել պարկեշտ ուսանողի մը համար, որուն յանցանքը և միմիայն յանցանքը իր տանը չքաւորութիւնն է : Ուսանողի համար լաթերու խեղճութիւն կ'ըմբռնեմ, բայց դպրոցական պէտքերու չքաւորութիւն չեմ ըմբռներ, — չքութիւն ան դոյզն նպատ-

տին՝ որ կեանքի կ'ստեղծէ խեղճութենէ սմբուած, մաշած կեանքերու վրայ : Լաթերէն գէպի թուղթ, գրիչ, դասագիրք քայլը՝ նշանակելի յառաջդիմութիւն մըն է : Բարեսիրացին երկրորդ քայլն ալ այն է որ երկու տարիէ հետէ՝ գեղարուեստից վարժարան կը դնէ իր ծախքով Ս. Խաչ վարժարանի մէկ շրջանաւարտը, և այսպէս պղտիկ ոստումներով կամ օժտումներով սոսկ լաթի աւանդական ճամբէն, իրական ծառայութիւններ ընելու նշանը կուտայ :

Սկիւտարու Բարեսիրացն իրեն եկամտի աղբիւր ունի գանձանակ մը, որ համեստիկ արհեստաւորներու մաքուր ձեռքով 4—5000 դահեկան շահ կը բերէ : Եկեղեցւոյ մէջ պնակ, և ա'հնէն աւելի իր գործերուն մէջ ծածկուած համեստ երիտասարդներէ խնամակալութիւն մը : Անդամներուն բարոյական վարկը մեծապէս նպաստած է բարեսիրական գործին, և անհատական համակրանքն ու յարգանքն է, որ Սկիւտարցի հաւր մը այսօր սիրով վեր կ'ելլէ սանդուղով մը, կը մտնէ խնամակալաց սենեակն ու սեղանին վրայ դնելով իր նուէրը՝ դուրս կ'ելլէ շնորհապարտ սրտով :

Բարեսիրացն իր յաջողութիւններով կուտայ ան գործնական ապացոյցներէն թէ մեր ժողովուրդը յուսահատ չթողուր պաշտօնէութիւն մը եթէ համոզուի որ իր զրամները, իր ընձեռած նպաստը հաւատարիմ ձեռքերու մէջ կը դրսիս :

ՀՐԱՆԴ

ՍԻՐՈՅ ԵՐԳԵՐ

Նեո մը տըկար կուրծքիս մէջէն
Անցուց իմ ձեռքը կանացի
Մինչեւ ի սիրտս, ու մընչեցի,
Ինչպէս առիւծը կը մըռնջեն :

Ու լեցուեցան շրթունքս իսկոյն
Ինչպէս կուրծքիս վէրքն՝ արիւնով,
Ինչպէս տերեւ երբ փրչէ հով,
Անժամանակ ինկայ տօգոյն :

Բայց չը դարձար դու պահ մ'ետիդ,
Նայիլ ինչպէս կը մեռնի այն
Որուն յանգանքն եղաւ միայն
Սիրել քեզ, զո՞ր երթալ սրտիդ :

Որ մը սըրտիս մէջ անփորձ
Իջաւ նայուածքը խորին,
Ես այն օրէն անքերուդ
Եղայ պաշտողն ու գերին :

Դու լոկ արցունք մ'ինձ տըլիր,
Անոյշ արցունք մը ցաւի,
Սյն մէկ կամիլ արցունքին
Փոխան՝ ես կեանքս տըլի :

Դու երբեմն ինձ ժպտեցար,
Բայց չէր ժպտիտդ այն իրաւ,
Ես այն ժպտիդ հաւատացի,
Ա'ն իմ գլխուս ձին բերաւ :

ԿԱՐԱՊԵՏ ՈՍԿԵԱՆ

ՃԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Անցեալ շաբաթ իրիկուն Ամեն. Ս.
Պատրիարքը՝ ընկերակցութեամբ Մաքսուտ
Սիւննի պէյի, կայս. Պալատ գնաց յատուկ
հրաւերով և ներկայ գտնուեցաւ Իֆթարի
սեղանին : Ընթրիքէն ետքը, Վեհ. Սուլ-
թանին հրամանով, Ս. Պատրիարքն՝ ա-
ռաջնորդութեամբ երկրորդ սենեկապետ
Նուրի փաշայի, պատիւ ունեցաւ ներկա-
յանալու Ն. Կ. Վեհափառութեան, որ
բարեհաճեցաւ իր բարձր գոհունակու-

թիւնն յայտնել Տ. Խորէն Պատրիարքին՝
թէ՛ Պատրիարքութենէն առաջ և թէ՛ Պա-
րիարքութեան պահուն առ օսմանեան
Գահը ցոյց տուած հաւատարմութեան և
բարուք պաշտօնավարութեան համար :
Ն. Կ. Վեհափառութիւն հրամայեց իր
կայսերական բարեւներն հաղորդել իր
հաւատարիմ հայ հպատակներուն : Վեհ.
Սուլթանը բարեհաճեցաւ իր ձեռքով Ս.
Պատրիարքին շնորհել իմթիազ պատուա-
նշանի ոսկի և արծաթ շքադրամները : Ս.
Պատրիարք Հայրն իր երախտագիտական
զգացումները մատոյց յոտս կայս. գահ-
ոյից : Կիրակի օրն ալ Ս. Պատրիարքը
կայս. պալատ երթալով առաջին քարտու-
ղար Սիւրէյեա փաշային յանձնեց շնոր-
հակալութեան և երախտագիտութեան ու-
ղերձ մը, որոյ մասին Վեհ. Սուլթանը
բարեհաճեցաւ իր բարձր գոհունակու-
թիւնն յայտնել :

— Երուսաղէմի Պատրիարք Ամեն. Տ.
Յարութիւն Սրբազան պաշտօնանկ ըրեր է
Ս. Յարութիւն տաճարին տեսուչն և լու-
սարարն, որոց անզգուշութենէն յառաջ
եկած էր ծանօթ հրդեհը :

— Գէորգ Մ. Վ. Երէցեան՝ Երուսաղէ-
մի Պատրիարքութեան Կ. Պոլսոյ փոխա-
նորդին օգնական կարգուած ըլլալով, եր-
կուշաբթի օրը Երուսաղէմէն մայրաքաղաքս
ժամանեց :

— Փարիզի Գիտութեանց Ակադեմիան
իր վերջին նիստին մէջ՝ բնական պատ-
մութեան Միւզէումին հանքաբանութեան
ուսուցչութեան ընտրելի նշանակեր է Պ.
Խաչիկ Հինքեարպէյէնտեանը (Պ. Լա-
ռուս), երկրորդ ընտրելիի մը հետ :

— Կարնոյ առաջնորդարանին կողմէ
Պատրիարքարանին ուղղեալ գրութիւն մը՝
նկարագրելով սովին պատճառած աղէտ-
ները, Ս. Պատրիարք Հօր և Ազգ. Վար-
չութեան ուղադրութիւնը և հոգածու-
թիւնը կը հայցէ :

— Ս. Պատրիարք Հայրը՝ Մալաթիոյ
գաւառական վարչութեան մէկ հեռագրին
վրայ, հեռագրեց Կիլիկիոյ Կաթողիկոսին
որ ներելով տեղւոյն առաջնորդ Տ. Սահակ
եպիսկոպոսին՝ իր վիճակը վերադարձնէ
զայն, որովհետեւ երկրաշարժին պատ-

ճառած աղէտներուն առթիւ ժողովուրդը Տ. Սահակ եպիսկոպոսի ներկայութիւնը կը խնդրէ թախանձանօք:

—Բերայի թաղական խորհուրդն իր վերջին նիստին մէջ վերջնական որոշում մը տուեր է Նոր Թատրոնի փլատակներուն նկատմամբ: Ինչ ինչ պատճառներով թատրոնի վերաշինութիւնն անկարելի դատուելով, որոշուեր է գեանաշարիլը շինել ընդարձակ գարեջրատուն մը և անոր վրայ երկու յարկ «աբաւթման»ներ: Այս նոր շէնք պիտի բերէ տարեկան 900 ոսկիի հասոյթ, մինչ թատրոնը կը բերէր 750 ոսկի: Այս շինութեան համար 5500էն 6000 ոսկի ծախք կ'ենթադրուի, որոյ փոխարէն 3600 ոսկի ապահովարական ընկերութենէն առնուած ըլլալով, տարբերութիւնը կալուածոց անտուկէն պիտի գանձուի:

—Բաղաքական Ժողովն իր չորեքշաբթի օրուան նիստին մէջ խորհրդակցութիւններ կատարեց Ազգ. Հիւանդանոցի հոգաբարձութեան հետ Հիւանդանոցի ցարդ չինուած մասերուն համար, ինչպէս են հիւանդարան, որբանոց և այլն: Ժողովն որոշեց որ Հիւանդանոցի հոգաբարձութիւնն այդ մասերու շինութեան համար ծրագիր մը բերէ, ըստ այնմ հարկ եղածն ի գործ դրուելու համար: Հոգաբարձութիւնը նոյնպէս հարկ դատած է նորոգել Հիւանդանոցին մօտ գտնուած Ս. Յակոբայ վանքը, ուր առժամապէս փոխադրուած է վանքը:

—Հանգուցեալ Աճէմօղլուի կտակը որով իր հինգ միլիոն ֆրանքի հարստութիւնը կը թողուր Փարիզի Ազգատախնամ վարչութեան, փոխուելու վրայ է: Ասպետ Ջունգ, որ այժմ Փարիզ կը գտնուի, հըրաւիրած է անոր եղբորորդին Յովհաննէս Աճէմօղլուն ի Փարիզ: Երկու առաջնակարգ փաստաբաններ՝ նկատելով հանգուցեալին հպատակութիւնն որ ռումանական է, կարծիք յայտնած են թէ կըրտակը կրնայ բեկանուիլ ի նպաստ ժառանգորդաց որք խոստացեր են՝ եթէ ժառանգութիւնը ձեռք բերեն՝ չնորհքով բաժին մը հանել յօգուտ ազգային բարեգործական և կրթական հաստատութեանց:

Ն Ե Ր Ք Ի Ն

Նախալի թագուհին անցեալ ուրբաթ իրիկուն Կ. Պոլիս ժամանեց Մէսաթըրիի «Ալֆէ» շոգենաւով: Վեհ. Սուլթանին հետ տեսակցեցաւ, հացկերոյթներ տրուեցան ի պատիւ իրեն, պարտեցաւ մայրաքաղաքիս հետաքրքրաշարժ վայրերն և՛ սքանչանալէ վերջ Արեւելքի հոյակապ մայրաքաղաքին վրայ՝ չորեքշաբթի օրը «Օլէկ» շոգենաւով մեկնեցաւ դէպ ի Եայթա:

—«Հագիպաթ» կը ծանուցանէ թէ Էնկիւրիի և Սեբաստիոյ վերաքննիչ ատեաններու ընդհանուր դատախազները՝ Կեսարիա և Մարզուան գացած են՝ դատական ինչ ինչ գործերու քննութեան համար:

—Մեծահարուստ յոյն մը ծանուցած է Եէտի-գուլէի Յունաց հիւանդանոցի հոգաբարձութեան, թէ պատրաստ է քսան հազար օսմ. ոսկի տալ ի նպաստ սոյն բարենպատակ հաստատութեան: Ուրիշ յոյն բարերար մըն ալ, հինգ հարիւր հազար ֆրանք նուիրած է նոյն հաստատութեան: Այս գումար կա՛մ դրամատան մը պիտի յանձնուի և կա՛մ կալուածներու գնման պիտի յատկացուի: Ուրիշ յոյն բարերար մըն ալ, —բարերարներու ինչ ոսկեղծ շարք, — Պ. Բօնաթանթէն Սուսանօբուլօ երեսուն հազար ոսկի կտակեր է Պէօյիւքտէրէի Յունաց եկեղեցիին և վարժարաններուն:

—Կայս. կառավարութիւնն որոշած է մէկ միլիոն ոսկիի փոխառութիւն մը ընել օսմ. պանքայէն, որուն հետ բանակցութեան սկսած է այս նպատակով:

—Ամեն նահանգներէ մեծագումար նպաստներ կը շարունակուին ղրկուիլ Մալաթիոյ երկրաշարժէ միասնականելուն:

—Ջեռնհաս իշխանութիւնը տեղեկանալով որ Երուսաղէմի գաւառին մէջ զրտնուած մէկ քանի տպարաններ զիրք կը տպեն առանց արտօնութեան, գրած է տեղական կառավարութեան որ այդ տպարաններուն տէրերը պաշտօնական արտօնութիւն առնել պարտաւորուին:

—Սելանիկէն Տէտէ-Աղաճ շինուելիք երկաթուղին պիտի երկարի մինչեւ Կիւ-

միւլճինէ, Ֆերէճիք, Սկիւպ, Սերէշ, և Տրամա: Պ. Ռընէ Պատուի հարկ եղած պատրաստութիւնները կը տեսնէ շինութեանց ձեռնարկելու համար:

—Հանրօգուտ շինութեանց և առեւտրական նախարար Թէվֆիգ փաշա Միւշիրութեան աստիճանի, իսկ էլժտական նախարար Նազիֆ էֆէնտի Վէզիրութեան աստիճանի բարձրացան:

—Այս տարի ձմրան սաստկութեանը պատճառով, ամիրնի հունձքը Անատոլուի ամեն կողմը աւրուած ըլլալուն, վերջին օրերս գիները մեծ բարձրացում կրած են, այնպէս որ օխան՝ 120էն 200 դրուշի ելած է, և կը կարծուի որ աւելի եւս բարձրանայ:

—Սոսիէթէ Ժէնէրալ դրամատունը կայս. հրամանով լուծուեցաւ: Պ. Լաֆիւանդ հաշուեյարդար կարգեցաւ:

—«Սաատէթ» լրագիրը կը հաղորդէ թէ Պոլսոյ ամերիկեան դեսպանատան առաջին քարտուղար Պ. Նիւպէրի կեսարիա ուղեւորած է:



Հինգշաբթի օրը, Գրանաթի Երախ. Ժողովը մերժեցաւ ձեռակոչուած շինութեանը, որով ոգելից անգործներու ասուքին փոփոխման ծրագիրը բաժնուած էր էլժտացոյցէն, Պ. Ռիպոյի նախարարութիւնն հրաժարեցաւ:

—Հանգուցեալ Ժիւլ Ֆէռի տեղփրանսական ձեռակոչոյի նախագահ ընտրեցաւ Պ. Շալմէլ-Լաքու, նախկին նախարար արտաքին գործոց: Ակադեմիոյ անդամներէն հանգուցեալ Ռընանի տեղ եւս Ակադեմիոյ անդամ ընտրուեցաւ Պ. Շալմէլ-Լաքու:

—Թէնէսի նահանգին (Միացեալ-Նահանգք) Միմֆիս քաղաքը սոսկալի մրբիկէ մը աւելակուեր է: Միսիսիբի գետի հովտին մէջ Բիլվէնտ քաղաքը բոլորովին կորեր է: Բոբանանի մօտ Գրուիսլոմ լեռը բոլորովին կործաններ անհետ եղեր է:

—Աքսորեալներու խումբ մը Սիպերիա զրկուած միջոցին ձիւնի ահռելի փոթորիկի մը հանդիպեր է. 374 կալանաւորներէն

283ը մեռեր են, որոց 62ը քաղաքական դատապարտեալներ են:

—Մօտերն Գերմանիոյ Վիլհէլմ կայսրը պիտի այցելէ Իտալիոյ Սքեցիա նաւահանգիստն: Մեծ կարեւորութիւն կը տրուի այս այցելութեան:

—Պիզմարք իշխան ըսեր է թէ երեսփոխանական յառաջիկայ ընտրութեանց մէջ այլ եւս ընտրելի չպիտի ըլլայ: Արդէն վերջերս խորհրդարանը ոտք չէր կոխեր նախկին վարչապետը:

—Տոտս զօրավար, Տահոմէի արշաւախումբին յաղթական հրամատարն, Ֆրանսա կոչուած է կառավարութեան կողմէ: Զօրավարը թէ՛ իր առողջութիւնը պիտի դարմանէ և թէ՛ կառավարութեան հետ պիտի որոշէ Տահոմէի զինուորական վերակազմութեան ծրագիրը:

—Պ. Շառլ ար Լեսեփա և Պոնտէն վճռաբեկ ատեանին դիմած են՝ ընդդէմ եղեռնադատ ատեանի վճռին: Իսկ Պայհօ, ապաշաւող Պայհօն, վճիռը կռնակը առաւ անձայն անխօսուկ և բանտ գնաց:



Ամեն անոնք, որք կ'ուզեն ձաւայի և Չինու ճամարիտ թէյ խմել, պէտք է գիտեն Կ. Պոլիս, Պահլէ-Գաբու, Ճէլալ Պէյ խանի կից թիւ 10, ԵԱՎՐՈՒԵԱՆ և ԻՍԱ-ԳՈՒԼԵԱՆ վաճառատունը, որու զանազան տեսակ թէյեր՝ թէ՛ տեսակի ազնուութեան, թէ՛ ճաշակի և հոտի անուշութեան և թէ՛ գիներու աժանութեան կողմանէ անհամեմատելի են:

Յիշեալ վաճառատան թէյերը Թուրքիոյ բոլոր թէյավաճառաց քով կը գտնուին ի վերեւ գրուած մարքայով, որու կեղծերը երած ըլլալով պէտք է զգուշանալ:

ԱՐՏՕՆԱՏԻՐ

Կ. Ս ԻՍԹԻԻԿՆԱՆ

Ի Տպարանի ԱՐԵԻԵԼԻՔ Եւ ՄԱՍԻՍ Լրագրաց